Բարձր կարծրությամբ ոչ մետաղական նյութերում անցքերի մշակման օպերացիան խիստ աշխատատար է և բարդ: Օրինակ, սարքաշինության և ժամացույցների քարերի մշակման ժամանակ աշխատատարության 30%-ից ավելին բաժին է ընկնում գայլիկոնմանը: Այնուամենայնիվ գայլիկոնումը հղկման գործընթացից տարբերվում է նրանով, որ գայլիկոնի կտրող եզրը անընդհատ հպման մեջ է գտնվում մշակվող դետալի հետ, մինչդեռ հղկման ժամանակ ոչ:

Փեշեմետալուրգիայի եղանակով արտադրվող գայլիկոնների պատրաստման ժամանակ հիմնականում օգտագործվում է M1 մակնիշի կապակցող նյութ, ինչպես նաև MC6 մակնիշի մետաղասիլիկատային և M50 մակնիշի կարծր համաձուլվածքային նյութեր: Մեծ տարածում է գտել հատկապես M1 մակնիշի կապակցող նյութը, որը բաղկացած է անագից և պղնձից (α -ֆազ) և Cu₃Sn ինտերմետաղական δ ֆազից: Այնուամենայնիվ գայլիկոնների հիմնական բնութագրերից են, արտադրության հատիկների ամրությունը, հատիկայնությունը և հարաբերական կոնցենտրացիան:

Այնուամենայնիվ գայլիկոնումը, ինչպես ընդունված է, իրականացվում է քսուբասառեցնող հեղուկների օգտագործմամբ: Քսուբասառեցնող հեղուկների ճիշտ ընտրումը և կիրառումը հնարավորություն է տալիս գայլիկոնին աշխատելու ինքնասրման ռեժիմով:

Ամենալավ քսուբասառեցնող հեղուկը էնոլսոլի և ջրի լուծույթն է՝ ЭМУС, СВМУ-2, ПГА-205 և տրամաֆորմատորային յուղը: Ինչպես նշվել է, այնուամենայնիվ գայլիկոնումը հղկման լարվածային վիճակ է, այդ իսկ պատճառով գործնականում վերցվում է կտրման փոքր արագություն ոչ ավելի 2մ/վրկ: Կտրման արագության որոշակի փոփոխությունը մեծապես ազդում է գայլիկոնման որոշ պարամետրերի վրա: Օրինակ, կտրման արագությունը 0,5մինչև 2,4մ/վրկ մեծացման դեպքում, երբ գայլիկոնումը կատարվում է պայտածն 3մ տրամագծով գայլիկոնով և մշակվում է ապակի, ապա գործընթացի արտադրողականութ

յունը մեծանում է ավելի քան 4 անգամ: Կտրման արագության մեծացումը ուղեկցվում է առանցքային ուժի և ավնաստի տեսակարար կորստի փոքրացմամբ, ինչպես նաև մշակվող մակերևույթի անհարթության փոքրացմամբ: Ըստ գայլիկոնի տրամագծից խորհուրդ է տրվում գայլիկոնում իրականացնել իլի հետևյալ արագություններով՝

Գայլիկոնի տրամագիծը, մմ	Պտտման արագությունը, պտ/ր
1 – 3	12000-24000
3 – 6	6000-12000
6 – 15	3000-6000
15 – 30	2000-3000

Ալմաստային գործիքների աշխատունակությունը ընդհանուր տեսքով որոշվում է ալմաստի միավոր զանգվածի կողմից մշակվող նյութի քանակությամբ: Աշխատունակության հիմնական բնութագիրը՝ ալմաստի տեսակարար կորուստն է, իսկ լրացուցիչը՝ մշակվող մակերևույթի անհարթության աստիճանը:

Հատիկայնության և հարաբերական կոնցենտրացիայի մեծացումով նկատվում է բոլոր տեսակի ալմաստային գայլիկոնների կայունության մեծացում: Սակայն այս պարամետրերի մեծացումը փոքրացնում է գործիքի մեխանիկական ամրությունը: Ալմաստային գայլիկոնման ժամանակ անցքերի մշակման ճշտությունը համապատասխանում է 9-12 կվալիտեոին:

ՊՂՆՁԻ ՀԻՄՔՈՎ ԴԻՄՊԵՐՍ ԱՍՐԱՑՎՈՂ ՓՈՇԵՀԱՄԱՉՈՒԿԱԾՔՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒՄԸ

Ս. Աղբալյան, Ա. Թումանյան

Հայրենական և արտասահմանյան գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ինտերմետաղական ֆազով ամրացվող պղնձի հիմքով փոշեհամաձուլվածքների (Cr – Zr) կառուցվածքագոյացումը ուսումնասիրված է ոչ բավարար չափով: Այդ իսկ պատճառով կատարվել է պղնձե փոշեհամաձուլվածքների լրիվ կառուցվածքային ուսումնասիրություն, օգտագործելով օպտիկական և էլեկտրոնային մանրադիտակներ, ինչպես նաև միկրոռենտգեն ակառուցվածքային, սպեկտրային և ռենտգենագրական վերլուծությունը: Տաք արտամղման օպտիմալ ռեժիմներով ($T_{\text{արմ}}=100\pm 25^\circ\text{C}$; $\tau_{\text{արմ}}=2$ ժ., $2\alpha=110^\circ\text{C}$; $\lambda=5$) ստացված համաձուլվածքներից պատրաստվել են հղկանմուշներ, որոնց խաժատման համար կիրառվել է աղաթթվի 40% ջրային լուծույթ:

Տաք արտամղումից հետո փորձանմուշները ենթարկվել են թրժարղման ($T_{\text{թրժ}}=675\pm 25^\circ\text{C}$; $\tau_{\text{թրժ}}=2$ ժ.), միման ($T_{\text{միմ}}=100\pm 25^\circ\text{C}$; $\tau_{\text{միմ}}=2$ ժ.) և ծերացման ($T_{\text{ծ}}=425\pm 25^\circ\text{C}$; $\tau_{\text{ծ}}=2$ ժ.): Սթնուրտի բացասական ազդեցությունը բացառելու համար ջերմմշակումը կատարվել է արգոնի միջավայրում: Հետազոտությունները ցույց են տվել որ Cu – Cr – Zr, Cu – Cr – Zr – TiC համաձուլվածքներում ծերացման ժամանակ ստացվում է ծավալակենտրոն խորանարդային ցանցով β ֆազ: Հայտնաբերվել է նաև փոքր քանակությամբ Cu_2Zr միջմետաղական ֆազ:

Հետազոտությունների արդյունքների հիման վրա պարզվել է, որ Cu – Cr – Zr – TiC -ի միկրոկառուցվածքը տարբերվում է իր մանրահատիկությամբ և ֆազերի բաղադրամասերի համաչափ բաշխմամբ: Այսպիսի կառուցվածքը հնարավորություն է տալիս բարձրացնել համաձուլվածքի կարծրությունը մինչև $\text{HB}=1500-1800$ ՄՊա՝ պահպանելով ջերմակայունությունը:

ОСОБЕННОСТИ ТЕРМОМЕХАНИЧЕСКОЙ ОБРАБОТКИ В ОБЛАСТИ ПОРОШКОВОЙ МЕТАЛЛУРГИИ

С. Мамян, А. Петросян

Особо важную роль в создании новых высокопрочных материалов с заданными характеристиками играет технология порошковой металлургии. Она гарантирует большую экономию металла, высокую технологичность, повышение ресурса работы изделий, дает возможность полностью автоматизировать и механизировать производство.

Создание высокопрочных порошковых сталей и композитов с высоким сопротивлением усталости и хрупкому разрушению является проблемой первостепенной важности, от которой зависит прогресс порошковой металлургии в области изготовления конструкционных деталей и инструментов с максимальным использованием прочностных ресурсов материала. Пути решения указанной проблемы являются деформационное уплотнение, термическая обработка (ТО), химико-термическая обработка (ХТО) и термомеханическая обработка (ТМО).

В данной работе порошковая металлургия использовалась как эффективная технология для получения уникальных заготовок под ТМО. Исследование велось по трем направлениям.

1. Металлокерамические стальные заготовки, полученные из высококачественных железных порошков и штамповой сажи, подвергались высокотемпературной термомеханической обработке (ВТМО). Эффективная технология получения заготовок требуемой формы-размеров обеспечивает основное условие успеха ТМО – равномерность деформации по объему. В результате фундаментальных исследований была установлена связь между пористостью и оптимальными режимами ВТМО, обеспечивающая максимальную конструкционную прочность. Резкое повышение комплекса механических свойств имело место как для низкоуглеродистых, так и для высокоуглеродистых сталей. Так, например, металлокерамическая сталь с 0,8% углерода после ВТМО с 50%-ным обжатием и отпуска при 300°C с холоднодеформированных образцов имела следующие значения механических свойств: $\sigma_{\text{в}}=2000$ МПа; $\sigma_{\text{т}}=1750$ МПа; $\delta=8\%$; $\psi=20\%$; $\text{KCT}=0,09$ МДж/м²; $\text{KCU}=0,35$ МДж/м².

2. Целью исследований в этом направлении являлось создание эффективной технологии получения высокопрочных цементованных деталей с применением ВТМО, минуя длительный диффузионный процесс цементации. Из железографитовой порошковой смеси с разным составом по углероду получают двухслойные брикеты типа цементованных путем поочередной их прессовки в одной пресс-форме. После спекания квазицементованные брикеты подвергались ВТМО. Данная технология обеспечивает постоянство концентрации углерода и поверхностной твердости по слою, что в сочетании с ВТМО приводит к резкому повышению износостойкости и долговечности изделий. В таблице 1 приведены характеристики усталостной прочности ($\sigma_{\text{т}}$), работы разрушения образцов (KCU, KCT) обычной цементированной стали и квазицементированной порошковой стали с применением ВТМО.

3. Исследовалось новое направление – конструирование многослойных материалов с использованием эпор внутренних напряжений под воздействием внешних предельных нагрузок. Технология создания многослойных материалов учитывала преимущества порошковой технологии и ТМО. Данная технология позволяет получать высокопрочные материалы с высокой сопротивляемостью к хрупкому разрушению.

Таблица 1. Механические свойства цементированных углеродистых сталей

Технология получения образцов	Содержание углерода, %		HRC Поверхности	$\sigma_{\text{т}}$, МПа	KCU, МДж/м ²	KCT, МДж/м ²
	сердце-вины	наруж-слой				
Порошковая	0,2	0,90	60 - 62	460	0,8	0,5
	0,35	0,92	58 - 62	750	0,6	0,25
Обычная цементация	0,2	0,8 - 1	56 - 60	250	0,4	0,15

Анализ механических свойств, приведенных в таблице 2, показывает, что наличие мягкого слоя приводит к резкому повышению усталостной прочности и вязкости стали.

Таблица 2. Механические свойства углеродистых порошковых сталей после различных обработок

Способ получения образцов	temp, °C	$\sigma_{\text{т}}$, МПа	$\sigma_{\text{т}}$, МПа	KCU, МДж/м ²	KCT, МДж/м ²
ТМО стали с 0,85 С	250	2100	580	0,2	-
	300	2000	620	0,3	0,1
То же с мягким подслоем	250	2000	920	0,5	0,45
	300	1900	900	0,6	0,5

ՓԱՓՈՒԿ ԵՆԹԱՇԵՐՏՈՎ ԿՈՄՊՈԶԻՏՍԱՅԻՆ ԵՆԱՇԵՐՏ ԲԱՐՁՐԱՍՈՒՐ ՊՈՂՊԱՏՆԵՐ
Ա. Պետրոսյան, Ս. Մամյան

Ցածր ածխածնային պողպատներից հետագա ջերմաքիմիական մշակմամբ կամ միջին ածխածնային պողպատներից նորմալացված կամ լավացված վիճակում հետագա մակերևութային միամանր կոնստրուկցիոն դետալների ստացման բոլոր հայտնի եղանակները հնարավորություն են ստեղծում պողպատի ամրության պաշարի միայն մասնակի օգտագործում: Սովորաբար պողպատները բարձրամուր վիճակում ($\sigma = 1500-2600$ ՄՊա Տ ավելի) հակում ունեն բեկուն քայքայման և չեն կարող օգտագործվել բարդ և բարձր բեռնվածության տակ աշխատող դետալների և կոնստրուկցիաների համար:

Պողպատի ամրության պաշարի առավելագույն օգտագործումը, երկարակեցության և հուսալիության միաժամանակյա ապահովմամբ, ինչպես նաև մետաղատարության ցածրացմամբ հնարավոր է դառնում նյութերի բարձր ամրության և հարակալունության համատեղման դեպքում: Մեր կողմից մշակված են փափուկ մակերևութային ենթաշերտով բարձրամուր գեղձ եռաշերտ պողպատների ստացման տարբեր տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս լուծել առաջադրված խնդիրները: Այս աշխատանքում քննարկված է միայն փոշե տեխնոլոգիան: Եռաշերտ ծակոտկեն նախապատրաստվածքները ստացվում են համապատասխան խառնուրդների հաջորդաբար լցման և մամլման ճանապարհով, արդյունքում բարձրածխածնային մակերևութային շերտի (0,8±0,9%С) և միջուկի (0,6±0,8%С) միջև ստացվում է «փափուկ» ցածրածխածնային (0,15±0,25%С) շերտ: Այս նախապատրաստվածքներից ջերմամեխանիկական մշակմամբ ստացվել են տարբեր դետալներ և նմուշներ մեխանիկական փորձարկման համար:

Արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ երկրաչափական և կոնցենտրատային պարամետրերի ճիշտ ընտրության դեպքում եռաշերտ կոմպոզիտներն ունեն շատ բարձր մեխանիկական հատկությունների համալիր
 $\sigma = 2000 \pm 2500$ ՄՊա, $\sigma_{\text{т}} = 900 - 1050$ ՄՊա, $KCU = 0,5 \pm 0,8$ ՄՁ/մ², $KCT = 0,4 \pm 0,6$ ՄՁ/մ²:

ՋՐԱԾՆԱՅԻՆ ԲԵԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՇԵՄԵՏԱԼՈՒՐԳԱՅՈՎ
ԲԱՐՁՐԱՍՈՒՐ ՊՈՂՊԱՏՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ա. Պետրոսյան, Ս. Մամյան

Համաձայն մեր հետազոտությունների, ինչպես նաև ըստ գրականության տվյալների ջրածնի պարունակությունը ջերմամեխանիկական մշակումից և տաք դիմամիկ մամլումից (երբ տաք դեֆորմացիան իրագործվում է անմիջապես եռակլաման ջերմաստիճանից) հետո ստացված բարձրամուր փոշե պողպատներում կազմում է 12-20 սմ³/100գ մետաղում, այն դեպքում, երբ ջրածնի պարունակությունը մարտենյան պողպատում տատանվում է 3-4-ից մինչև 5-7 սմ³/100գ մետաղում: Ջրածինը պողպատներում գտնվում է պինդ լուծույթում, իսկ ավելի մեծ քանակություններով կուտակվում է ծակոտիներում, հատիկների սահմաններում և դիսլոկացիաների վրա: Որքան բարձր է փոշե պողպատի ամրությունը ($\sigma \geq 150-250$ ՄՊա), այնքան խիստ է դրսևորվում ջրածնային բեկունությունը, հատկապես մարտենսիտային ստրուկտուրայի դեպքում:

Ջերմամեխանիկական մշակմամբ բարձրամուր դետալների ստացման պրոգրեսիվ եղանակների տեխնոլոգիականությունը խիստ աճում է, երբ ձուլվածքների փոխարեն կիրառվում են փոշե մետալուրգիայի ճանապարհով ստացված նախապատրաստվածքներ: Այս առաջադիմական տեխնոլոգիայի հետագա զարգացման գործում մեծ դեր է խաղում ջրածնային բեկունության ուսումնասիրությունը:

Ջրածնային բեկունության խնդիրը, որը մինչև այժմ անտեսվում է փոշու մետալուրգիայում, ուսումնասիրվել է երկաթի մաքուր փոշիների (A_2 և ճժԼԸԾ մակնիշների) հիմքի վրա ստացված П25, П35, ПУ8А, П40Х, П40ХН, П40ХНМ և П12 ХН3А տիպի պողպատների վրա: Ջրածնագրկում ապահովելու համար կիրառվել են վակուումային թրծում կամ ինդուկցիոն եռակլաման ջերմամեխանիկական մշակումից առաջ:

Ուսումնասիրվել են ջրածնային բեկունության մեխանիզմը և կինետիկան, ինչպես նաև ջրածնագրկման ազդեցությունը ջերմամեխանիկական մշակմամբ ստացված բարձրամուր պողպատների մեխանիկական հատկությունների վրա: Ուսումնասիրված պողպատների հարվածային մածուցիկության ցուցանիշների աճը KCU-ի համար կազմում է մոտ $0,3 \pm 0,4$ ՄՁ/մ², իսկ KCT-ի համար $0,2 \pm 0,3$ ՄՁ/մ², հոգնածային սահմանի ($\sigma_{\text{т}}$) աճը 150-300 ՄՊա:


ՊՈՂՊԱՏՆԵՐԻ ՋԵՐՄԱՔԻՄԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ՄԵԼԵՄԻ, ԿԱՐԲՈՆԱՏԻ ԵՎ ՓԱՅՏԱԾԻՒԻ ԽԱՈՆՈՒՐԳՈՒՄ

Գ. Գովսեփյան, Գ. Գալստյան

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պինդ միջավայրում, որպես ակտիվ բազադրիչներ օգտագործելով հիմնային մետաղների ցիանատները և ցիանիդային միացությունները հնարավոր է ջերմաքիմիական մշակման եղանակով բարձրացնել պողպատների ամրությունը, կարծրությունը, երկարակեցությունը: Նման գործընթացները էկոլոգիապես մաքուր են, պայթուցիկ տարբեր չեն պարունակում, թունավոր չեն և հնարավոր է լիարժեք ձևով կիրառել արտադրության տարբեր ոլորտներում: Հետազոտություններից պարզվել է, որ մելեմի, կարբոնատի խառնուրդի և փայտածխի միջավայրում 450...600°C ջերմաստիճանում ստեղծվում է ակտիվ միջավայր, որը դրականորեն է անդրադառնում մետաղական արտադրանքների մակերևութային վրա ազդող և ածխածնի հագեցման գործընթացներում:

Աշխատանքի նպատակն է ցածր ածխածնային պողպատների մակերևութային վրա ջերմաքիմիական մշակմամբ ստանալ մաշակայուն շերտեր և ուսումնասիրել իրականացվող կառուցվածքագոյացման օրինաչափությունները:

Ուսումնասիրվել են դարսվածքում փայտածխի և մելեմի օդ պարունակող խառնուրդի տաքացման ժամանակ տեղի ունեցող մի շարք ռեակցիաներ, այդ թվում 500-600°C ջերմաստիճանում մելեմի ռեակցիան կալիումի կարբոնատի հետ



Առաջացած ամիակը դիսոցվելով $2NH_3 = 2H + 3H_2 \uparrow$, դարսվածքում առաջանում է ակտիվ ազոտ, որն ընդունակ է փոխազդելու երկաթի հետ և դիֆուզիվելու նրա մակերևույթում: Մյուս կողմից մելեմի և կալիումի կարբոնատի միջև տեղի ունեցող ռեակցիայի հետևանքով առաջացած ածխածնի երկօքսիդը ռեակցիայի մեջ մտնելով ցիանատի հետ $2KNCO + 2CO_2 = K_2CO_3 + 3CO + 2N$, անջատվում է ակտիվ ազոտ, որը փոխազդում է երկաթի հետ:

Ուսումնասիրվել են վերոհիշյալ փոխազդեցության կառուցվածքագոյացման օրինաչափությունները և կատարված են մետաղագիտական հետազոտություններ, ջերմաքիմիական մշակման ընթացքում պողպատում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ:

Չետազոտությունների արդյունքների հիման վրա մշակվել է տեխնոլոգիա փայտածխի, մելեմի և կարբոնատի խառնուրդում ստանալու մեծ ակտիվություն ունեցող միջավայր ցածր ածխածնային պողպատների ազոտով և ածխածնով հագեցման և մակերևույթների վրա մշակայուն շերտերի ստացման համար:

ՑԻԼԿԻ ՔԼՈՐԻԴԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶՐԱԾՆՈՎ

Վ. Մարտիրոսյան, Ա. Ղազարյան, Ա. Սաճկալյան, Մ. Սասունցյան

Աշխատանքի նպատակն է պարզել գունավոր մետաղներ պարունակող հանքերի և մետալուրգիական խարամների քլորացումից ստացված քլորիդային բարդ խառնուրդների $FeCl_2$, $FeCl_3$, $CuCl_2$, Cu_2Cl_2 և $ZnCl_2$ -ի ջրածնով վերականգնման գործընթացում $ZnCl_2$ -ի վերականգնման առանձնահատկությունները:

Նախորդ աշխատանքներից հայտնի էր, որ վերը նշված բարդ քլորիդային խառնուրդի վերականգնումը ուղեկցվում է երկաթ- պղնձային փոշեհամաձուլվածքների ստացումով: Ամերածեշտ էր ուսումնասիրել $ZnCl_2$ -ի վերականգնման առանձնահատկությունը, քանի որ քլորիդային բարդ խառնուրդում բացի երկաթի և պղնձի քլորիդներից պարունակվում է նաև $ZnCl_2$: Վերականգնման փորձերը տարվել են երկաթի և պղնձի քլորիդների ջրածնով վերականգնման համար հաստատված օպտիմալ հոսքային պայմաններում, 773Կ ջերմաստիճանում, ջրածնի 0,15/ր արագության և վերականգնման 1 ժամ տևողության պայմաններում: Սակայն այս դեպքում, քանի որ սուբլիմացվում են ինչպես $ZnCl_2$ -ը, այնպես էլ մետաղական Zn -ը, ռեակտորի վառարանից դուրս ընկած զոնան ելքի մոտ արտաքինից լրացուցիչ սառեցվել է մինչև 200-150° C, հոսող ջրով պատրաստված սառնարանով:

Փորձերը կատարվել են ինչպես պղնձաքիմիական գործարանի խարամների քլորացումից ստացված, այնպես էլ քիմիապես մաքուր (թ.մ.) մակնիշի $ZnCl_2$ -ի հետ:

Ուսումնասիրվել է $ZnCl_2$ -ի ջրածնով վերականգնման աստիճանի կախումը ջերմաստիճանից, փորձի տևողությունից և ջրածնի կոնցենտրացիայից:

Փորձերի արդյունքները ցույց են տվել, որ այն պայմանները, որոնք բարենպաստ էին պղնձի և երկաթի քլորիդների ջրածնով վերականգնման համար, չեն բավարարում $ZnCl_2$ -ի վերականգնմանը 773...873Կ ջերմաստիճանային տիրույթում $ZnCl_2$ -ի վերականգնման աստիճանը շատ ցածր է 3...5% և խիստ գիջում է երկաթի և պղնձի քլորիդների վերականգնման աստիճանին (98...100%):

Քանի որ ուսումնասիրված քլորիդային խառնուրդում $ZnCl_2$ -ի քանակը մեծ չէ 0,29%-ից, անգամ նրա 10% առավելագույն կորզման դեպքում երկաթ - պղնձային փոշեհամաձուլվածքում ցինկի քանակը կլինի չնչին և չի գերազանցի 0,25%-ին: Բացի այդ անհրաժեշտության դեպքում կարելի է մագնիսական տարանջատումով առանձնացնել երկաթափոշին և ստանալ ցինկ պարունակող պղնձափոշի- արույր:

ՊՂՆՁԻ ՔԼՈՐԻԴՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶՐԱԾՆՈՎ

Վ. Մարտիրոսյան, Ա. Ղազարյան, Ա. Սաճկալյան, Մ. Սասունցյան

Աշխատանքի նպատակն է պարզել պղնձի մոնոքլորիդի (Cu_2Cl_2) և երկքլորիդի ($CuCl_2$) ջրածնով վերականգնման գործընթացի կինետիկական օրինաչափությունները:


Վերականգնման փորձերը տարվել են իզոթերմ և պոլիթերմ պայմաններում, 100% ջրածնի կոնցենտրացիայի, ջրածնի հոսքի 0,15/ր արագության և 673...973Կ ջերմաստիճանային տիրույթում: Ուսումնասիրվել է պղնձի քլորիդների ջրածնով վերականգնման աստիճանի կախումը ջերմաստիճանից և փորձի տևողությունից: Վերականգնման գործընթացը տեզի է ունենում նկատելի արագությամբ 15...30ր ընթացքում:

Սակայն Cu_2Cl_2 -ի վերականգնումը ընթանում է ավելի դժվար, քանի որ այն հեղուկանում է համեմատաբար ցածր ջերմաստիճաններում, և առաջացած հեղուկ ֆազը ստեղծում է դիֆուզիոն դժվարություններ ջրածնի համար: Փորձի 60ր տևողության պայմաններում 773Կ-ում $CuCl_2$ -ի վերականգնումը ընթանում է ամբողջովին, իսկ Cu_2Cl_2 -ինը ընդամենը 85%-ով:

Ջերմաստիճանի բարձրացումը նպաստում է պղնձի քլորիդների վերականգնման գործընթացին, բայց երկու դեպքում էլ վերականգնված պղնձը սկսում է հալվել և դիսպերս փոշու փոխարեն մետաղյա բարակ ծածկույթի ձևով նստում է նավակի պատերին: Ուստի նպատակահարմար է վերականգնումը տանել 773Կ-ից ոչ բարձր ջերմաստիճաններում փոխարենը ավելացնելով փորձի տևողությունը:

$CuCl_2$ -ի վերականգնման գործընթացը փուլերով, նախ ընթանում է Cu_2Cl_2 միջանկյալ փուլը, ապա $Cu_2Cl_2 \rightarrow Cu$ փուլը: Պղնձի քլորիդների վերականգնման դիֆերենցիալ կորերը հաստատում են այդ երևույթը:

Cu_2Cl_2 -ի և $CuCl_2$ -ի վերականգնման գործընթացի ակտիվացման էներգիաները համապատասխանաբար հավասար են 59,99 և 60,74ԿՋ/մոլ, որը նույնպես հաստատում է, որ $CuCl_2$ -ի վերականգնումը ընթանում է միջանկյալ արգասիքի առաջացմամբ:



Փորձագիտական տվյալները գծայնացվել են $lg(-lg(1-\alpha))$ -ից: կորորինատներում: Որոշվել են արագության գործընթացի կինետիկական պարամետրերը:

ԵՐԱԿԱՆՈՒ ԵՎ ՊՂՆՁԻ ՔԼՈՐԻԴՆԵՐԻ ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶՐԱԾՆՈՎ

Վ. Մարտիրոսյան, Է. Առաքելովա, Ա. Սաճկալյան, Մ. Սասունցյան

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել երկաթի և պղնձի քլորիդների մեխանիկական խառնուրդի վերականգնումը ջրածնով:

Այս հարցը խիստ կարևորվում է պղնձաքիմիական գործարանի կոմվերտորային խարամների և պիրիտային խտանյութի քլորացումից ստացված քլորիդային խառնուրդից մետաղափոշիների ստացման տեխնոլոգիայի մշակման տեսակետից:

Փորձերը տարվել են քիմիապես մաքուր $FeCl_3$ և $CuCl_2$ -ի հետ: Համատեղ վերականգնման գործընթացը իրականացվել է խտանյութերի 17%Cu և 20%Fe-1:1, 16%Cu և 38,9%Fe-3:1-ի և կոմվերտորային խարամների 20:1 զանգվածային հարաբերություններով:

Փորձերը տարվել են ջրածնի հոսքի 0,15լ/ր արագության և 473...973Կ ջերմաստիճանային տիրույթում: Քլորիդային խառնուրդների համատեղ վերականգնման կորերի բնույթը չի տարբերվում առանձին վերցրած $FeCl_3$ և $CuCl_2$ -ի վերականգնման կորերից: Վերականգնման արդյունքը խիստ կախված է $CuCl_2:FeCl_3$ հարաբերությունից: $CuCl_2:FeCl_3=3:1$ հարաբերության դեպքում դժվարանում է վերականգնման գործընթացը և վերականգնված երկաթի մակերեսին առաջանում է պղնձի ծածկույթ: Միայն $CuCl_2:FeCl_3=1:3$ հարաբերության սկսած վերականգնման արգասիքը երկու մետաղափոշիների դիսպերս խառնուրդն է: Փորձերի արդյունքները հաստատելու նպատակով կատարվել է ռենտգենֆազ անալիզ:

$FeCl_3$ -ի լրիվ վերականգնում տեղի է ունենում 7734-ում, որտեղ երևում են միայն $\alpha-Fe$ -ին բնորոշ գծեր: 7734-ում փորձի 45ր տևողության պայմաններում տեղի է ունենում $CuCl_2$ -ի լրիվ վերականգնում մետաղական պղնձի առաջացումով:

$FeCl_3$ -ի և $CuCl_2$ -ի համատեղ վերականգնումը կատարվել է 7734-ում 30ր-ում և $FeCl_3:CuCl_2$ տարբեր հարաբերությունների դեպքում: Օպտիմալ է համարվում $FeCl_3:CuCl_2=3:1$ հարաբերությունը և նրանից բարձր հարաբերությունները: Այդ պայմաններում վերականգնման արգասիքը պղնձի և երկաթի փոշիների մեխանիկական խառնուրդն է: Մագնիսական տարանջատումով կարելի է բաժանել երկաթը և պղնձը և ստանալ բացարձակ մաքուր $\alpha-Fe$ -ի և Cu -ի մետաղափոշիներ:

ԱԼԱՎԵՐՈՒ ՊՂՆՁԱ-ՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԽՏԱՆՅՈՒԹԻ և ԽԱՐԱՍԵՐԻ ՔՆՈՐԱՅՈՒՄԻՍ ՍՏԱՅՎԱԾ ԲԱՐՉ ՔՆՈՐԻՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶՐԱԾՆՈՎ

Վ. Սարտիրոսյան, Է. Առաքելովա, Ա. Մաճկալյան, Ս. Սասունցյան

Ուսումնասիրվում է Ալավերդու պղնձա-քիմիական գործարանի խտանյութերի և նույն գործարանի մետալուրգիական խարամների համալիր քլորացումից ստացված բարձր քլորիդային խառնուրդների վերականգնման գործընթացը ջրածնով մետաղափոշիների ստացման նպատակով:

Վերցվել են 2 տարբեր խտանյութերի քլորացումից ստացված փորձանմուշներ 72,02% $FeCl_3$, 26,02% $CuCl_2$ և 1,96% $ZnCl_2$ (փորձանմուշ 1) և 58,90% $FeCl_3$, 0,09% $FeCl_2$, 37,49% $CuCl_2$, 3,00% Cu_2Cl_2 և 0,52% $ZnCl_2$ (փորձանմուշ 2) և խարամների քլորացումից ստացված – 96,59% $FeCl_3$, 0,01% $FeCl_2$, 2,05% $CuCl_2$ և 1,26% $ZnCl_2$ (փորձանմուշ 3) քլորիդային խառնուրդները:

Ուսումնասիրվել են նշված բարձր քլորիդային խառնուրդների ջրածնով համատեղ վերականգնման գործընթացները կախված ջերմաստիճանից, փորձի տևողությունից և ջրածնի կոնցենտրացիայից: Փորձերի համար ստեղծվել են ճիշտ նույն պայմանները, ինչ և նկարագրված էր նախորդ աշխատանքներում առանձին քլորիդների և նրանց մեխանիկական խառնուրդների համար: Բարձր քլորիդային խառնուրդների վերականգնումը ջրածնով ընթանում է մեծ արագությամբ և արդյունավետ, մետաղափոշիների ստացումով: Մակայն այս դեպքում նկատվում է քլորիդների վերականգնման աստիճանի զգալի աճ համեմատած առանձին քլորիդների և նրանց մեխանիկական խառնուրդների վերականգնման գործընթացների:

Ջերմաստիճանի մեծացումը նպաստում է բոլոր քլորիդների վերականգնման աստիճանի մեծացմանը: $FeCl_3$ -ի վերականգնումը սկսվում է ավելի շուտ: Նույնիսկ 6734-ում

փորձից 15 րոպե հետո նկատվում է երկաթի քլորիդի վերականգնման բավական բարձր տոկոս 80%: Ըստ երևույթին վերականգնված երկաթը այս դեպքում նույնպես նպաստում է $CuCl_2$ -ի վերականգնմանը, որը սկսում է ավելի ուշ: Այդ պայմաններում $ZnCl_2$ -ի վերականգնում դեռևս չի նկատվում:

7734 փորձի 30 րոպե տևողության պայմաններում $FeCl_3$ -ը վերականգնվում է ամբողջովին, իսկ $CuCl_2$ -ը մոտ 80%-ով: Այս պայմաններում նույնպես $ZnCl_2$ -ի վերականգնում չկա: Փորձի տևողության մեծացումը մինչև 30րոպե հանգեցնում է $FeCl_3$ -ի լրիվ վերականգնման, իսկ $CuCl_2$ -ի վերականգնումը կազմում է մոտ 80%: Այս պայմաններում $ZnCl_2$ -ից Zn -ի վերականգնում տեղի է առավելագույն արժեքի, բայց այս դեպքում դիսպերս մետաղափոշի չի ստացվում: Այն ստացվում է 7734-ում փորձի 60 րոպե տևողության պայմաններում, որի դեպքում տեղի ունի $FeCl_3$ և $CuCl_2$ -ի լրիվ վերականգնում, իսկ $ZnCl_2$ -ի վերականգնման աստիճանը այդ պայմաններում չի գերազանցում 3...5%: Այն հասնում է 10%-ի միայն 9734-ում, փորձի 1 ժամ տևողության պայմաններում:

Այսպիսով բարձր քլորիդային խառնուրդի համալիր վերականգնման արդյունքում ստացվում է լեգիրացված երկաթ-պղնձային փոշեհամաձուլվածք, ցինկի չնչին պարունակությամբ: Անհրաժեշտության դեպքում կարելի է մագնիսական տարանջատման եղանակով ստանալ մաքուր երկաթափոշի և ցինկ պարունակող պղնձափոշի- արտյուր:

ԿԱՐԾՐ ՀԱՄԱՉՈՒԼՎԱԾՔԵ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԶՈՂՈՒՄԸ ԱՈՒՆՑ ՖԼՅՈՒՄԻ

Գ. Հովսեփյան, Ի. Ղուլյան

Մեքենաշինության մեջ մեծ նշանակություն է տրվում մետաղակերամիկական կարծր համաձուլվածքներից պատրաստված գործիքների մշակակայունության բարձրացմանը:

Այդ իսկ պատճառով բարձր արտադրողականությամբ կարծր համաձուլվածք գործիքների մշակումը, որոնք նախատեսված են տարբեր տեսակի դետալների մշակման համար, խիստ հրատապ են:

Բազմակողմանի ուսումնասիրություններից պարզվել է, որ գործիքային արտադրության մեջ ընդհանուր կիրառություն գտած ԲՀՀ գեներատորներով կարծր համաձուլվածք քիթեղների և գերկարծր նյութերի (էլբոր, դելբոր, հեքսանիտ, կոմպոզիտ և այլն) զոդումը կատարված է տեխնոլոգիական իրականացման մի շարք դժվարությունների և թերությունների հետ: Ի հակադրություն ԲՀՀ-ի եղանակի, գործիքների կարգավորված ռեժիմներով զոդումը զազային հատուկ պաշտպանիչ միջավայր ունեցող հարահոսային վառարաններում օժտված են մի շարք առավելություններով և ապահովվում է բարձրորակ զոդակարերի ստացումը, տաքացման և սառեցման ռեժիմների կարգավորման հնարավոր է ներքին լարումների նվազեցում և արտադրողականության բարձրացում:

Այդ է պատճառը, որ գործիքների զոդման տեխնոլոգիայի կատարելագործումը կարևոր գործընթաց է, արդյունավետություն բարձրացման բնագավառում: Աշխատանքի նպատակն է մշակել տեխնոլոգիա կարծր համաձուլվածք քիթեղիկները գործիքների իրանային մասերին զազային միջավայր ունեցող հարահոսային վառարաններում, առանց ֆլյուսի զոդման համար և ուսումնասիրել կառուցվածքագոյացման օրինաչափությունները:

Մշակվել է տեխնոլոգիական գործընթացի իրականացման մեթոդիկա, որով պետք է երկու տարբեր եղանակներով ստացված զոդման կարի որակը և նրա հետ կապված մի շարք բնութագրեր:

Ուսումնասիրվել է հարահոսի տեղաշարժման արագությունը կախված տաքացման, զոդման, հովացման տեղամասերից, զոդանյութի հալման ջերմաստիճանից, տաքացման և սառեցման արագություններից:

ՀԱՆՔԱՔԱՐԻ ՄԱՆՐԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ
ՍՈՐԵԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Ս. Բալասանյան Գ. Թաղևոսյան, Վ. Բալասանյան

Վերջին ժամանակները հանրապետությունում հույժ կարևորություն է ձեռք բերել լեռնահարստացման արդյունաբերության տեխնոլոգիական սարքավորումների հուսալիության և ապահովման հիմնահարցը, որի լուծումն անմիջականորեն կապված է շահագործվող մեքենասարքավորումների հուսալիության մոդելների մշակման հետ:

Ներկա աշխատանքում Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքաքարի մանրացման տեխնոլոգիական համակարգի տևական շահագործման ընթացքում ազդեցատների և նրանց հանգույցների հուսալիության վերաբերյալ ստացված վիճակագրական տեղեկատվության մշակման արդյունքում կառուցվել են խափանումների առաջացման ժամանակի և վերականգնումների տևողության հավանականությունների բաշխման խտության ֆունկցիաների մաթեմատիկական նկարագրությունները: Շահագործման ընթացքում հավաքված վիճակագրական տվյալների նախնական մշակման միջոցով հետազոտման համար առանձնացվել են հանքաքարի մանրացման տեխնոլոգիական համակարգի (ՅՍՏ) առավել հուսալի ազդեցատները և նրանց առանձին հանգույցները (աղացները, նրանց յուղման համակարգերը, դասակարգիչները, գրունտային պոմպերը): Միանման ռեժիմներում գործող միատիպ սարքավորումների վերաբերյալ ստացված տվյալները միավորվել են նախապես վիճակագրական չափանիշներով (Կրուսկալ-Ուոլիսի, Ուիլկոքսոնի) ստուգելով նրանց համասեռությունը, իսկ տարբեր ռեժիմներում գործող ազդեցատների վերաբերյալ ստացված վիճակագրական տվյալները մշակվել են առանձին:

Բաշխումների վերաբերյալ առաջադրված վիճակագրական գիտավարկածները ստուգվել են Պիրսոնի չափանիշով և ընդունվել բարձր հավանականություններով: Ընդ որում որպես ենթադրյալ բաշխման օրենքներ դիտարկվել են Վեյբուլի, լոգարիթմական-նորմալ, ցուցային և Ռելեյի բաշխումները:

Աշխատանքում ստացված արդյունքները, որոնք լավ համաձայնեցվում են տեսական դրույթների և հետազոտությունների հետ հնարավորություն կընձեռեն զգալիորեն բարցրացնել Ձանգեզուրի ՊՄԿ-ի հանքաքարի մանրացման ազդեցատների շահագործման հուսալիությունը և կառուցել մանրացման համակարգի գործունեության արդյունավետության հետազոտման բոմփյութերային մոդելը:

ՀԱՆՔԱՔԱՐԻ ՄԱՆՐԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱՎՈՐՁԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԿ
ՍՈՐԵԼ

Ս. Բալասանյան Գ. Թաղևոսյան, Վ. Բալասանյան

Հուսալիության հաշվառմամբ հանքաքարի մանրացման համակարգի /ՅՍՏ/ նմանակային մոդելի կառուցմանը խոչընդոտող հիմնահարցերից մեկը նրա գործունեության գործընթացի մոդելի մեծ չափայնության հաղթահարումն է: Այս մոդելը, որը վերարտադրում է համակարգի տարրերի աշխատունակության փոփոխության հետևանքով նրա վիճակի փոփոխության գործընթացը, ընդամենը 10 տարրի դեպքում նկարագրվում է 2¹⁰ վիճակով, որոնցից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է վիճակագրական եղանակով որոշել համակարգի ելքային բնութագրերի գնահատականները: Հիշյալ մոդելի պարզեցման նպատակով ավանդական մեթոդների կիրառումը կամ անթույլատրելիորեն նվազեցնում է մոդելի ճշտությունը, կամ էլ կտրուկ սահմանափակում նրա հնարավորությունները:

Ներկա աշխատանքում հիշյալ հիմնահարցի լուծման նպատակով Ձանգեզուրի ՊՄԿ-ի հանքաքարի մանրացման համակարգի մոդելի /ՅՍՏ-ի/ կառուցման ժամանակ կիրառվել է

մեր կողմից մշակված պրոբլեմակոմպոզիցիայի մաթեմատիկական սխեման, որը հիմնվում է համակարգերի բազմամակարդակ հիերարխիկ նկարագրության հայեցակարգի վրա: Պրաէությունը այն է, որ ՅՍՏ-ն ներկայացվում է ոչ թե մուտք-ելք տիպի մեկ բարդ մոդելով, այլ համեմատաբար պարզ մոդելների հիերարխիայով, որոնցից յուրաքանչյուրը նկարագրում է մուլթի համակարգի գործունեությունը մանրամասնման որոշակի մակարդակի վրա:

Նկարագրության յուրաքանչյուր մակարդակի վրա համապատասխան մոդելի կառուցումը կապված է այդ մակարդակի վրա ներկայացված համակարգի կառուցվածքային տրոհման և նրա հետագա խոչընդոտման հետ:

Ելնելով մոդելավորման նպատակից և նկարագրման հարմարությունից ՅՍՏ-ը ներկայացված 3 մակարդակի վրա. մանրացնող ազդեցատների մակարդակ, մանրացնող համալիրների մակարդակ և համակարգային մակարդակ:

Առաջին մակարդակի վրա ՅՍՏ-ը կազմող ենթահամակարգերը դիտարկվում են որպես 2 հնարավոր վիճակ ունեցող օբյեկտներ, ինչը հնարավորություն է տալիս նրանցից յուրաքանչյուրի վիճակի փոփոխությունը տարրերի աշխատունակության փոփոխության հետևանքով նկարագրել մոնոտոն Բուլյան ֆունկցիայի միջոցով:

Երկրորդ մակարդակի վրա տվյալ մակարդակի յուրաքանչյուր ենթահամակարգի գործունեությունը նկարագրվում է պլոգրիթմական մոդելով: Այն նկարագրում է տվյալ ենթահամակարգ կազմող և նրա գործունեության վրա ազդող առաջին մակարդակի ենթահամակարգերի աշխատունակության փոփոխության հետևանքով նրա կառուցվածքային, աշխատանքային ռեժիմի և ելքային բնութագրերի փոփոխությունը:

Երրորդ մակարդակում ՅՍՏ-ը դիտարկվում է որպես մեկ ամբողջական տարր: ՅՍՏ-ի գործունեությունը այս մակարդակի վրա նկարագրվում է անալիտիկական մոդելով, որը կապ է հաստատում ամբողջ համակարգի և 2-րդ մակարդակի ենթահամակարգերի մանրացնող համալիրների համապատասխան ելքային բնութագրերի միջև:

ՅՍՏ-ի մոդելի կառուցման ժամանակ առաջարկված ձևայնացված մաթեմատիկական սխեմայի կիրառումը նրա մեծ չափայնության հաղթահարման հետ մեկտեղ հնարավորություն է ընձեռում հետազոտել ՅՍՏ-ի արդյունավետությունը միաժամանակ մանրամասնման մի քանի մակարդակների վրա:

ՀԱՐՍԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԿԱՌԱՎՈՐՈՒՄԸ ՆՈՄԻՆԱԼԻ ՕՊՏԻՄՈՒՄԻ
ՄԵԹՈԴԻ ԿԻՐՆՈՒԹՅԱՄԸ

Ս. Համբարձումյան, Շ. Բալասանյան

Վճիռների կայացման տեսության հիմնական խնդիրներից մեկը արդյունավետության հայտանիշի որոշումն է, որը թույլ է տալիս գնահատել կառավարման ստրատեգիան դրված նպատակին հասնելու աստիճանի տեսանկյունից:

Բարդ տեխնոլոգիական համակարգերի մասնավորապես օգտակար հանածոների հարստացման գործընթացի, վերլուծության ժամանակ, հաճախ ծագում է հավանականությունների բազմաչափ բաշխումը գնահատելու անհրաժեշտություն, որն իրենից բավականաչափ բարդ խնդիր է ներկայացնում: Ուստի հետազոտողի առջև կանգնում է արդյունավետության հայտանիշի ձևափոխման և այնպիսի տեսքով ներկայացման խնդիր, որը հարմար է հետագա վերլուծման համար, օրինակ հայտանիշների գումարի տեսքով, որոնք օգտագործվում են մասնակի հայտանիշների որոշման համար:

Ներկա աշխատանքը նվիրված է վերը նշված տեսքով որոշակի տիպի հայտանիշների, ավելի կոնկրետ նոմինալի օպտիմումի հայտանիշի ներկայացման հնարավորության վերլուծությանը, ինչպես նաև ստացված հայտանիշների օպտիմալացման ուղիների որոնմանը:

Աշխատանքում փորձ է արվում հարստացման գործընթացները ներկայացնել առան-
ձին տեխնոլոգիական օղակների հաջորդական միացման տեսքով, ընդ որում մի օղակի
ելքային պարամետրերը հանդիսանում են գրգռիչ գործոններ:

Ամբողջ համակարգի համար նոմինալի օպտիմումի հայտանիշը ներկայացվում է
հետևյալ տեսքով.

$$\varphi = \int \dots \int_y c(y_1, y_2, \dots, y_n) dP(y_1, y_2, \dots, y_n),$$

որտեղ $P(y_1, y_2, \dots, y_n)$ -ն համակարգի ելքային պարամետրերի բաշխման հավանակա-
յին ֆունկցիան է, $C(y_1, y_2, \dots, y_n)$ -ն համակարգի գործառնման սպասվելիք արդյունքի
օգտակարության ֆունկցիան է, y -ը ելքային պարամետրերի հնարավոր արժեքների բազ-
մությունը: Բերված արտահայտությունը ներկայացնում է $C(y_1, y_2, \dots, y_n)$ ֆունկցիային
Լեբեգ-Ստիլտյեսի ինտեգրալ Y բազմության վրա տրված P չափի նկատմամբ: